




ՆՈՐ
ՏԱՐԿԱ
ՆՎԵՐ

Քրիստոս 16
Գր



8-93



Ընկեր ԼՆՆԻՆԸ 4 տարեկան հասակում



Մեր սիրելի սսակինը



11-2517 Ժբ

ՆՈՐ ՏԱՐՎԱ ՆՎԵՐ

Շապի Եկար
Ա.Ն. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ



Պ Ե Տ Է Ր Ս Տ

ՀԼԿՑԵՄ ԿԵ ԿԻԳ Մանկապատանեկական գրականության բաժին
Յ Ե ր Ե զ ա Գ

1938

1/2

ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ
ԿԱԲԻՆԵՏ

Յ Ե Ր Գ Ե Ր

Ս Ո Ս Ե Լ Ո

Ծ ԵՐ ՈՒՆԻ ՆԻՆԻԿԱՆ

Ծերացել ե մեր Նինիկան,
Հողնել թեվը հերոսի...
Տեսեք վո'նց ե կոտրել նրան
Ժամանակն անհողի:

Հե՛յ գիտի, հեյ... քանի տնդամ
Մեր «Ա.Ի.Թարան» յերգելով
Կուրծքը բացած, ձեռքին մանզաղ՝
Սլացել ե արտերով:

Խուրճը խրճին կիտել ե նա,
Արտում դեզերը շարել,
Ու քրտնածոր դեմքին նրա
Շողը հրդեհ ե վառել...

Ձեն յենթարկվում ել իր կամքին
Ուժից ընկած վոտներն իր.
Յերազում ե պառկած, կամ հին
Կյանքից պատմում թոռներին...

Յերբեմն նա մոտիկ արտից
Յերգի ձայն ե իմանում,
Վոր դեռ ամուր նրա սրտին
Խնդուն թրթիռ ե բերում.—

Վեր ե կենում զողողալով
Հենակների ոգնությամբ,
Յեվ տղերանց աչք ածելով՝
Ժպտում անչափ խնդությամբ...

Վրաց. քարգմ. Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«Կլավի» Ժուրնալի № 32
28 հուլիսի, 1896 թ. էջ՝ 574

ԿԱԶՄՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՅ.— Վրաստանի Խորհրդալին Գրողների Միության որգան «Մնաքորին» անցյալ տարվա № 5-ում հրատարակել է ընկեր ՍՏԱԼԻՆԻ — պատանեկության ժամանակ գրած բանաստեղծությունները: Առայժմ հայտնաբերված են ընդամենը 6 բանաստեղծություն, վորոնցից մեկի քարգմանությունը տպագրում ենք այս ժողովածույում:

Ս. ՆՏԱԼՍԿԻ

Յ Ե Ր Ե Խ Ա Ն Ե Ր

Ծեր Սուլեյմանից Ձեզ հազար վողջույն,
Ծաղկում ե կյանքը մեր, յերեխաներ,
Ձեզ համար յերկրում նոր այդ ե բացվում,
Նոր խինդ ե բերում Ձեզ, յերեխաներ:

Վանեցեք Ձեզնից անպետք ծուլություն,
Յերգով դիմեցեք դուք որը արթուն.
Թող յեղնիկի պես արեվը խնդուն
Դիմավորի Ձեզ, ջան յերեխաներ:

Բաց ե գրքի պես՝ կյանքում ամեն ինչ.
Սովորեցեք դուք լող, փաղք ու թռիչք,
Աստղերի ցուքն ու ծովը հմայիչ
Միշտ գրավել են Ձեզ, յերեխաներ:

Լայն ե յերկիրը մեր ու ընդարձակ,
Անհուն խինդ ունի, գիրք մեծաքանակ:
Կուզե՞ք ձեռք բերել.— պետք ե շարունակ
Սովորեք անդուլ, իմ յերեխաներ:

Մեր հայրենիքում — դարուն ե խնդուն,
Ձեզ սնուցանող յերկիրը սիրուն,
Թող փրթթի, դառնա ուժեղ, զվարթուն,
Յուրա արժանի պես, յերեխաներ:

ՁՄԵՌՎԱ ԻՐԻԿՈՒՆԸ

Հողմը մեզով յերկինքն առնում,
 Գալարում է բուքը ձյան,
 Մին մանկան պես լաց է լինում,
 Մին վռոնում է վոնց զազան:
 Մին վայրենի սուլում պես-պես,
 Աղմկում է տանիքում,
 Մին՝ ուչացած ճամբորդ, ասես՝
 Լուսամուտն է նա թակում:

Մեր խրճիթը աղքատ ու հին,
 Յե՛վ մթին է, և ատուր.
 — Ի՞նչ էս նստել պատի տակին,
 Իմ պառավս, եղպես լուռ:
 Հողնե՞՛ր էս զու փոթորիկի
 Վռոնոցներից խելագար,
 Թե՞ նիրհում էս քո լիկիկի
 Բզզոցի տակ միալար:

Յերգիր, վո՞նց եր ապրում խաղաղ
 Հավքը ծովի են ափին,
 Յերգիր, վո՞նց եր աղջիկը վաղ
 Զուրը դնում մինչ արիին:
 Հողմը մեզով յերկինքն առնում,
 Գալարում է բուքը ձյան,
 Մին՝ մանկան պես լաց է լինում,
 Մին՝ վռոնում է վոնց զազան:

Թարգմ. ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ձ Մ Ե Ռ

Ծառը մերկացավ,
 Ձրկվեց տերեւից,
 Ձյունի փաթիլներ
 Իջան վերևից:

Ձյուն ու ցուրտ յեկավ,
 Առու, գետ լոնց,
 Իր սպիտակ գորգը
 Ձմեռը փոնց:

Ձյունը ծնկահար,
 Նստեց մեծ ճամբին,
 Սպիտակ հյուսեր
 Կիտեց դետափին:

Ծառեր ու թփեր
 Ձմեռն արծաթեց,
 Սար ու ձոր ընկավ
 Կալեց ու կապեց:

ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ՁՅՈՒՆԸ

— Ճերմակ փաթիլ,
Սիրուն թիթեռ,
Քեզ ո՞վ բերեց
Յերկիրը մեր:

— Յես արցունքի
Շիթ եմ սառած,
Ցրտից սառել
Ընկել եմ ցած:

Այն մոխրազույն
Ամպը վոր կա,
Իմ սիրասուն
Մայրիկն է նա:

Յուրա ե այնտեղ,
Բուք ու բորան,
Արևն այնտեղ
Մթնում կորավ:

Ու հեկեկաց
Մայրս հանկարծ,
Շատ արցունքներ հողմահալած
Ու նրանց հետ՝
Ցրտից սառած՝
Յես ել ընկա,
Յերկնքից ցած:

— Ասա տղա՛
Ինչի՞ց ե վոր
Թևեր ունես
Ասեղնավոր:

— Ճամբին դալիս
Գրկեցին ինձ
Բյուրեղիկներ
Հազարավոր:

— Ճերմակ փաթիլ,
Սիրուն թիթեռ,
Իջիր, էջիր
Յերկիրը մեր:

Իջիր անթիվ
Քույրերիդ հետ,
Գարունը դա
Կդառնաք հետ:

Իսկ հիմա մենք
Յերկնքի տակ
Դաչտում հյուսենք
Ճերմակ վերմակ:

Տաքացնենք
Ցորեն, դարի —
Գարնանն առատ
Թող հաց լինի:

ՄԵՐ ՏՈՆԱԾԱՌԸ

Ահա և մեր
Տոնածառը
Կանդնած հպարտ
Ու հսկա,
Վորքա՛ն ուղիղ
Ու յերկար է,
Ծայրին աստղ
Հինգթևյա:

Վրան վորքա՛ն
Ողանալ կա,
Պարաշյուտ ու
Խաղալիք,
Վորքա՛ն սիրուն,
Փայլուն իրեր
Յեւ յապտերներ
Գեղեցիկ:
Ի՛նչ լուսավոր
Ու պայծառ են
Ճրագները
Իլիշի,
Վորքա՛ն պայծառ
Փայլիլում են
Կանաչ ճյուղերի
Միջին:

Իսկ մենք ուրախ,
Շրջան կազմած,
Պար ենք գալիս,
Պտտվում,
Յեւ նոր տարվա
Անուշ յերգն է
Մեր գահլիճում
Զիլ թնդում:

Ա. ՇԱՅԲՈՆ

Տ Ո Ն Ա Ծ Ա Ռ Ի Ն

Ջա՛ն, յեղենու ծառ,
Քեզ հազար բարև,
Մեր տոնը պայծառ,
Դու յես զարդարել:

Գալիս ես հանկարծ՝
Հեքյաթ հյուրի պես,
Ձուգսերդ հագած,
Վողջունում ես մեզ:

Լույսերի ծովում,
Մանկական խաղով,
Քեզ վովք ենք ձոնում
Անուշիկ տաղով:

Անցնում է տարին՝
Մեզ չես ճանաչում,
Մենք որը - որին
Յեղնում ենք, աճո՛ւմ:

Ջա՛ն, յեղենու ծառ,
Քեզ հազար բարև,
Մեր տոնը պայծառ,
Դու յես զարդարել:

11-28 1778բ



ՄԿՐՏԻԶ ԿՈՐՅՈՒՆ

ԽՆԴՈՒԹՅԱՆ ՏՈՆԱԾԱՌ

Հազար հույզով, հազար լույսով,
Հազար բերքով ես դու յեկել,
Ինչքան լավն ես, ինչքան պայծառ,
Հեյ ջան, խնդուիթյան տոնածառն:

Մեր Մեծ Ստալինը հարազատ
Պարգեվեց մեզ նոր կյանք ազատ,
Կյանքն ուրախ ե, կյանքը պայծառ,
Հեյ ջան, խնդուիթյան տոնածառն:

Մեր ուրախ յերզն ե զիլ հնչում,
Աւվակի պես միշտ կարկաչում,
Ստալինյան արևով դու վառ
Հեյ ջան, խնդուիթյան տոնածառն:

Ա. ԲԱՐՏՈ

ՀԻՇԻՐ ՅԵՂԲԱՅՐԻԿՆԵՐԻԴ

Տե՛ս սևամորթ մայրիկին՝
Ի՛նչ ե յերգում բալիկին.

— Գիշեր ե դալիս,
Քուն դնեմ բալիս.
Հայրիկդ չկա —
Նա դեռ ուչ կգա.
Ոյ-լա՛:

Յերբ դու մեծանաս
Շուտով կիմանաս,
Վոր լայն աշխարհում
Մենակ չես ապրում.
Ոյ-լա՛:

Ընկերներ ունես
Մի հսկա բանակ.
Քնիր, իմ բալիկ
Չես մնա մենակ:

Տե՛ս դեղնամորթ մայրիկին՝
Ի՛նչ ե յերգում բալիկին.
Չին-ձին,
Յու-Չին,

Ինչ ծանր բեռ ե
Դրած իմ վզին:
Մեծացիր, բալիկ,
Որերը գալիք

Ձեռք լինի առաջես.
Յեղբայրներ ունես
Քեզ հուս ու կոնակ...
Մենակ չես, մենակ...
Ձին-ձին,
Յու-Ձին...

Տե՛ս սպիտակ մայրիկին,
Ի՛նչ է յերզում փոքրիկին.

Բայ-բայ,
Իմ Լենիկ,
Շուտով մեծանաս,
Ռեժեղ սրտանի,
Բանվոր կդառնաս.
Բայց չմոռանաս —
Յեղբայրներ ունես
Նրանց ել պիտի
Հույս աշխարհ հանես:

Բայ-բայ,
Իմ բալիկ,
Բայ-բայ,
Իմ Լենիկ:

ՀԱԿՈՒ ԱՂԱԲԱԲ

ՊԵՇԻԿ ՀՈՐԹՂ

Ռուբիկ, նայի՛ր մեր հորթին,
Ի՛նչ նախշուն է իր մորթին,
Պոչը ծաղիկ ու յերկար՝
Կոճերին է հավասար:
Նայի՛ր, մի տես ի՛նչ սիրուն
Աչքեր ունի փայլիլուն,
Ճակատը լեն ու պեծիկ,
Ականջները մեծ ու ձիգ:
Մի տե՛ս, վո՛նց է ցատկոտում,
Յե՛վ ինքնիրան քաջկոտում,
Պոչը ցրցում, վազ տալի,
Քացի զցում, ծառս զալի,
Իր շվաքից խրտնում,
Դարերն ընկնում, քրտնում:
Տղա կասե՛մ, կարենաս՝
Սրան մի հետ ձեռք տաս:

ՓՈՔՐԻԿ ՀՈՎԻԳ

— Յես չվի յեմ ուզում չինել,—
 Յես հովիվ եմ ուզում լինել
 Սարի լանջում,
 Զով կանաչում:

Կեսորվա գեմ՝ նստեմ քարին,
 Փչեմ կանչեմ վոչխարներին.—
 Գետում ջրեմ
 Ու աուն բերեմ:

Առատ կթեմ մաքիները,—
 Յես ել ուտեմ կաթի սերը,
 Մի քիչ մնամ՝
 Հանգստանամ...

Հոտը առնեմ — յեղնեմ սարը,
 Նորից յերգեմ, մինչ խավարը
 Փովի ճորում,
 Սեվ սարերում:

— Իսկ թե առնեն հոտը գառան
 Ու մութ սարից գայլերը գան,
 Դու ի՞նչ կանես,
 Ի՞նչ կլինես:

— Բաց կթողնեմ իմ Բողարին,
 Կանչեմ՝ իմ քաջ յեղբայրներին,
 Վոր կոլխողում
 Հաց են գրգում...

Յես չվի յեմ ուզում չինել,
 Յես հովիվ եմ ուզում լինել,
 Սարի լանջում,
 Զով կանաչում,
 Ուր ջրերն են ուրախ կանչում:

ՍՈՒՐԻԿԻ ՆԱՄԱԿԸ

Սուրիկին մի հարց եր տանջում —
 Ինչպես դառնա լավ ողաչու:
 Կտրատում եր կարտոն թղթեր
 Ու թոցնում քամու հետ վեր:

Սակայն ինքը մնում եր ցած
 Սև աչքերը յերկինք հառած.
 Ու կարոտով հեաքից նայում,
 Թե քամին այն ուր է տանում:

Վերջը տեսավ վոր չի լինի
 Թուչել յերկինք առանց թևի,
 Թուղթը փռեց իր առաջին,
 Նամակ գրեց ողաչույին.
 «Դու սիրելի իմ հորեղբայր,
 Վո՞նց ես թոչում այդքան յերկար:

Յես չինեցի մի ողանավ,
 Բայց անիրավ քամին տարավ
 Յեվ չթողեց վոր մի շնչով
 Թուչելի քո ճանապարհով»:

Ու քարտեզի վրա մի մեծ
 Իր թռիչքի ճամբան գծեց,
 Յեվ ուղարկեց խորհրդային
 Յերկրի հերոս Բայդուկովին:

ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ԾԻՏԻԿԸ

— ձի՛վ, ճի՛վ, ճի՛վ,
Ո՞վ է յերգում ծառին,
— ձի՛վ, ճի՛վ, ճի՛վ,
Ծիտն է յերգում ծառին:

Մանուկ.— Ի՞նչ ես ուզում ծիտիկ:
Ծիտիկ.— Յորնի մի բուռ հատիկ:
Մանուկ.— Ծիտի՛կ, յե՞րբ ես դատել,
Վոր ուզում ես ուտել:

Ծիտիկ.— Յես ծիտիկ եմ,
Պստիկ ճուտ եմ,
Առաջ ուտում,
Հետո դատում:
Վորսում բզեզ,
Վորդ ու թրթուռ,
Մաքրում պարտեզ,
Այգի ու դուռ:

Մանուկ.— Մի՛րո՛ւն ծիտիկ,
Ա՛ռ քեզ հատիկ,
Կեր, լիացիր,
Շուտ մեծացիր,
Մեր պարտեզին
Պաշտպան դարձիր:

Ա Ր Ձ Ա Կ

ԸՆԿԵՐ ՍԵՐԳՈՅԻ ՆՎԵՐԸ

Յես դեռ յոթ տարեկան էյի, վոր սկսեցի ելեկտրականությամբ հետաքրքրվել. կոճեր, մարտկոցներ էյի հավաքում, ելեկտրական զանգ, հեռախոս էյի սարքում...

Յերբ մենք ընտանիքով փոխադրվեցինք տրակտորի գործարան, վորոչեցի ելեկտրական ավտո կառուցել, բայց այնպիսին, վոր կարողանար 18 ժամ անընդհատ աշխատել, միայն թե հարմար ելեկտրական մոտոր և գործիքներ չունեյի: Շատ մտածեցի, թե ոգնության համար ում դիմեմ և վորոչեցի՝ պետք է նամակ գրել ընկեր Որջոնիկիձէյին:

Վոչ վոքի բան չասացի: Նստեցի, սկսեցի գծագրել և պատրաստեցի այն, ինչ վոր պետք էր: Հետո գրեցի նամակումս, վոր ուզում եմ ելեկտրական ավտո շինել, բայց մոտոր և գործիքներ չունեմ:

Նամակս ծրարեցի և հասցեն գրեցի.

Մոսկվա. Կրեմլ, ընկեր Որջոնիկիձէյին:

Մի ամիս անցավ. ստուգումների շրջանն էր. թվաբանությունից ստուգում ունեյի, յեռանդով պարասում էյի, բացի թվաբանությունից ուրիշ բանով չէյի զբաղվում:

Մի որ հանկարծ դպրոցի ղերեկտորը կանչում է ինձ. «Ի՞նչ է պատահել», մտածում եմ. «չե վոր վոչ մի անկարգ բան չեմ արել»:

Յերբ ներս մտա ղերեկտորի սենյակը, նա առաջարկեց ինձ դասարանի ղեկավարի հետ միասին գնալ տրակտորի գործարանը:

Գնացինք. մեզ ընդունեց գործարանի ղերեկտորը:

— Այդ դո՞ւ յես պիտներ Սուսլովը, — հարցրեց նա:

— Այո, յես եմ. — պատասխանեցի:

— Ընկեր Որջոնիկիձէյին նամակ գրե՞լ ես:

— Գրել եմ:

Պարզվեց, վոր նամակս ստացել են և դժադրերիս ծանոթացել: Յերբ մեր գործարանի գիրեկտորը գործով Մոսկվա յե գնում և ներկայանում ընկեր Որջոնիկիձեյին, նա պատվիրում է գիրեկտորին:

— Պիոներ Սուսլովը հետաքրքրվում է ելեկտրականությամբ, կանչիր մտադ, ծանոթացիր և ոգնիր նրան:

Դիրեկտորն ինձ մի հիանալի, փոքրիկ, գեղեցիկ մտաոր ավեց: Մտաորի վրա մի թիթեղ եր կպցրած և վրան գրված:

Վոլոգիա Սուսլովին:

ԲՈՒԴՅՈՆՆԻՆ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ

1

Մի որ ընկեր Բուդյոննին յեկավ գործարան, ուր աշխատում էյին մանկապարտեզի յերեխաների հայրերը: Գործարանը շատ լավ եր աշխատել և Սեմյոն Միխայլովիչ Բուդյոննին յեկել եր հարվածայիններին շնորհավորելու: Նա ավտոյից դուրս յեկավ: Հարվածայինները հավաքվեցին ակումբ: Բուդյոննին ծառ ասեց:

Հանկարծ բեմի վրա դուրս յեկան գործարանի մանկապարտեզի յերեխաները. Մարթան և Մանիան մի քիչ քաշվում էյին: Շատ ժողովուրդ կար, աղմուկ եր:

— Ընկեր Բուդյոննի, — ասաց Մանիան և լռեց:

— Յես եմ Բուդյոննին. — ասաց Սեմյոն Միխայլովիչը:

— Քեռի Բուդյոննի, մորաքույր Սիման... սկսեց Մարթան, բայց Մանիան նրան ընդհատեց:

— Մենք բոլոր յերեխաներս, խնդրում ենք Ձեզ հյուր դալ մեզ մոտ՝ մանկապարտեզ: Այստեղ մեզ մոտ չբերթ կլինի:

— Մեզ մոտ աղջիկներին ել թույլ կտան, վոր չբերթին մասնակցեն, — ավելացրեց Մարթան:

— Դե, ընկերներ, — ասաց Բուդյոննին հարվածայիններին. — քանի վոր յերեխաները կանչում են, չեմ կարող հակառակվել: Յենթարկվում եմ: Գալիս եմ: Գնանք: Ինձ ել տարեք ձեզ հետ:

Յեվ Բուդյոննին բռնեց յերեխաների ձեռքից: Նրանք ակումբից փողոց դուրս յեկան: Բուդյոննուն տեսնելով՝ փողոցում յեղողները՝ վողջ փողոցը գոչեց՝ «Բուդյոննին, Բուդյոննին և գալիս»:

Յերեխաները Սեմյոն Միխայլովիչի ձեռքից բռնած հպարտ-հպարտ գնում էյին: Իսկ նրանց հետեվից դանդաղ շարժվում եր Բուդյոննու ավտոն:

Այսպես նրանք յեկան մանկապարտեզ: Ներս մտան գլխավոր մուտքից: Մորաքույր Սիման դիմավորեց ընկեր Բուդյոննուն: Յերեխաները նրան չըջապատեցին:

— Քեռի, դուք իսկապե՞ս Բուդյոննին եք. — հարցրին յերեխաները:

— Աղնիվ խոսք, — ասաց Բուդյոննին:

— Իսկ ինչո՞ւ ձիու վրա չեք:

— Այստեղ ձի չի մտնի, — պատասխանեց Սեմյոն Միխայլովիչը:

— Իսկ ինչո՞ւ թուր չունեք:

— Ժողով գնալիս թուր չեն կապում. — ասաց Բուդյոննին, — յես հարվածայինների մոտ եմ յեկել, մտերմանում եմ, և վոչ թե կովում: Ճիշտ ե, չե՞:

— Եյ, ինչքա՞ն ումբիկներ ունես ոճիքիդ, — ասացին յերեխաներից մի քանիսը և ամեն կողմի վրա հաշվեցին չորս ումբիկ:

— Իսկ քանի՞ չքանչան. — գոչեցին մյուսները և համբեցին Կարմիր գրոչի չորս չքանչան:

— Համենայն դեպս դուք իսկականը չեք, — ասավ համառ Ավգուստը: — Իսկական Բուդյոննին փառավոր գեներալ ե: Իսկ իսկական գեներալը մի՞թե մանկապարտեզ կղա:

— Մեզ մոտ գեներալներ չկան, — աղմկեցին յերեխաներն իրար ընդհատելով: — Բուդյոննին ամենեվին ել գեներալ չե, նա կարմիր հեծելազորի ամենաղլխավորն ե:

— Ճիշտ ե, — ասաց Բուդյոննին: — Կեցցեք, յերեխաներ: Իսկ յեթե չեք հավատում, վոր յես իսկական Բուդյոննին եմ, կարող եք թեկուզ բեխերս շոշափել:

Յեվ բոլոր յերեխաները հերթով շոշափեցին ընկեր Բուդյոննու բեխերը:

Այնուամենայնիվ դուք նման եք, — ասաց Յուլիկը:

— Ո՞ւմ նմանն եմ:

— Նկարներում յեղած Բուդյոննուն: Մենք ել ենք Ձեզ նկարել, — ասացին յերեսխաները և բոլորը ցույց տվին իրենց նկարածները:

Ընկեր Բուդյոննու նկարը ձիու վրա նստած շատ ել լավ չէր դուրս յեկել: Միայն ումբիկներն էյին ուղիղ:

Բայց ընկեր Բուդյոննուն նկարները դուր յեկան: Նա ծիծաղեց և ասաց.

— Կեցցեք, յերեսխաներ, վոչինչ, վոր շատ ել նման չե: Սովորեցեք ավելի լավ նկարել: Այ, ումբիկները ճիշտ են:

3

Յերեսխաները շուտով Բուդյոննու հետ բոլորովին մտերմացան: Նրանք ցույց տվին իրենց բոլոր խաղալիքները, մանկապարտեզի բոլոր սենյակները. — և ննջարանները և ընթերցարանները և լվայվելու սենյակը: Մինչև անգամ վիճեցին Բուդյոննու հետ այն մասին, թե ով է գլխավորը՝ վարմիր բանակայինը, միլիցիոները, ողաչուն, թե՞ նաև վաստին: Ընկեր Բուդյոննին պատասխանեց ճիշտ այնպես, ինչպես մորաքույր Սիման. «Բոլորը հարկավոր են: Վոչ վոք գլխավոր չի»:

Հետո սկսեցին չքերթը: Սա մի նշանավոր չքերթ էր: Մասնակցում էյին բոլոր յերեսխաները: Շքերթի հրամանատարն ել ինքը՝ ընկեր Բուդյոննին էր:

Ամեն ինչ այնպես էր, ինչպես կարմիր հրապարակում: «Յերաժշտություն», — ասաց Սեմյոն Միխայլովիչը: Յեվ մորաքույր Սիման նստեց դաշնամուրի մոտ: Հյուր յեկած ծնողները տեղավորվեցին պատերի մոտ գտնվող նստարանների վրա:

Բոլոր յերեսխաները ծածկեցին բուդյոնովյան գլխարկները, կարմիր աստղերով: Նրանք վերցրին իրենց փոքրիկ հրացանները և դրոշակները:

— Մենք բուդյոնովցիներ ենք. — գոչեցին յերեսխաները:

— Սպասեցեք, — ծիծաղեցին ծնողները: — Բուդյոնովցիներ կլինեք հետո, իսկ առայժմ բուդյոննիկներ եք:

Մի քանիսը նստեցին աթոռների վրա, վորպես ձիավորներ, թիկունքը դեպի առաջ. — սա կարմիր հեծելազորն էր: Ուզում էյին Բուդյոննու համար ել այդպիսի մի ձի ճարեն: Բայց բոլոր ձիերը նրա համար փոքր էյին: Յերեսխաների մի մասը հագավ հակադադային դիմակները: Սա քիմիական գունդն էր: Մյուսները յերեք-յերեք նստել էյին նրստարանների վրա — դրանք տանկեր էյին: Վոմանք ել կարմիր խաչեր կապեցին — դրանք սանիտարներն էյին: Առաստաղից կախեցին դիրիժաբլների և ողանավերի մոդելները: — Շքերթ, գզա՛ստ, — հրաման տվավ Բուդյոննին և բոլորը լռեցին:

— Աջ դա՛րձ. — գոչեց Բուդյոննին: Միայն Ավգուստը չհասկացավ և դեպի ձախ դարձավ: Շփոթվելուց նրա աջ ախանջը կարմրել էր:

— Վոր կողմն է քո աջ ախանջը քոր գալիս. — հարցրեց Բուդյոննին:

— Այս կողմը, — ասաց Ավգուստը և դարձավ այն կողմը, վոր աջ ախանջը քոր էր գալիս:

— Հանդիսավոր մարչ. — հրաման տվավ Բուդյոննին և ձեռքը դրեց գլխարկին:

— Դեպի աջ, դեպի դաշնամուրը, քայլով մարչ:

Մորաքույր Սիման նվագեց Բուդյոննու մարչը. «Մեր յեղբայր Բուդյոննի, վողջ ժողովուրդը մեզ հետ է». — յերգեցին յերեսխաները: Յեվ չքերթն սկսվեց:

Մարչ, մարչ: Անցավ հետեվակը

Յեվ աղմկեց ինչ վոր բան, —

Ասես թե հեծելազորը,

Ասես թե հրետանին

Յեվ բանակը չքերթով

Անցնում է շարան-շարան:

— Մեկ յերկու, ձախ... Մեկ, յերկու, ձախ...

— Լավ եք քայլում յերեսխաներ, — գոչեց ընկեր Բուդյոննին:

— Ծառայում ենք աշխատավոր ժողովրդին, — պատասխանեցին յերեսխաները:

Յուլիկի համար այստեղ ավելի հետաքրքրական էր,

քան թե կարմիր հրապարակում: Սլանում եր աթոռների վրա յերեխաների հեծելագործը: Վորոտում եր մարչը: Քայլում եյին քիմիկոսները և սանիտարները: Ծածանվում եյին դրոշակները: Որորվում եր դիրիժաբլը: «Ուռա», գոչում եյին յերեխաները: Ծնողները տեղերից վեր եյին թռչում: Նրանք ել եյին «ուռա» գոչում և ծափահարում:

Բուռյոննիկները չքերթը վերջացրին...

ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

1

Այդ տեղի ունեցավ ընդամենը չորս ամիս սրանից առաջ:

Մեր ուղեփակում յես ամենից յերիտասարդ մարտիկներից եյի:

Հունվարի տասներեքին մյուս մարտիկների հետ միասին յես պեռք ե մեր մեծ հայրենիքին հավատարմության յերդում տայի: Մինչև յերդում տալը մնացել եր յերկու ժամ: Մարտիկները հանգստանում եյին:

Հանկարծ լսվում ե հրաման. «Դեպի հրացաններ»...

Մարտական լրիվ պատրաստությամբ մենք մտանք տայդան:

Պարզվեց, վոր սահմանի մյուս կողմից մեր հողն ե մտել թշնամու մի զինված ջոկատ:

Սահմանախախտներին մենք հանդիպեցինք խիտ անտառում: Սկսվեց կռիվը: Հրացանաձողությունը տևեց մի ժամից ավել:

Մեր ուղեփակի հրամանատար ընկեր Ագեևը հրաման տվեց. «Դրո՛հ»...

Անսպասելի կերպով հարձակման անցնելը խուճապ առաջացրեց ձապոնացիների շարքերում: Նրանք սկսեցին ցիրուցան փախչել: Մենք նրանց կրնկակոխ հետևեցինք ու փախցրինք մինչև սահմանը: Հանկարծ նրանց ողնության յեկան նոր ուժեր:

Այդ ժամանակ նրանք բոլորը միասին մեզ վրա յեկան:

Նրանք թվով անհամեմատ շատ եյին, բայց մենք չնահանջեցինք ու գործը հասավ ձեռնամարտի: Հենց ձեռնամարտն սկսելու ընդմիջում յես վիրավորվեցի թշնամու հրացանի զնդակից: Զոկի հրամանատար ընկեր Լերեգևին զեկուցեցի, վոր վոտքից վիրավոր եմ: Նա ասաց. «Գնա թիկունքը»:

Վոտքիս վերքից արյունը չարտում եր: Բայց թշնամիներն առաջանում եյին: Հարկավոր եր նրանց վոնդել մեր հողից ու փրկել ընկերներին: Ի՞նչպես յես կարող եյի զնալ թիկունք կովի տաք ժամանակը: Զե՞ վոր յես դեռևս ուժ ունեյի հրացանը ձեռքում պահելու:

Ու յես մնացի շարքի մեջ մինչև մարտի վերջը, քանի թշնամուն չեյին վոնդել: Միայն այն ժամանակ, յերբ նրանցից վոչ մեկը չլար մեր հողում, յես զնացի զինվորական հիվանդանոց:

Մարտական քաջագործության և հայրենիքին նվիրված լինելու համար մեր Միության կառավարությունն ինձ պարգևատրեց մարտական կարմիր դրոշի շքանշանով:

Յես դեռ յերիտասարդ մարտիկ եմ, բայց ինձ արդեն վիճակվեց գործով ապացուցել հայրենիքին նվիրված լինելըս: Յես համոզված եմ, վոր իմ արածը կաներ մեր յերկրի յուրաքանչյուր քաղաքացին: Համոզված եմ նույնպես, վոր ինձ նման կվարվեյիք և դուք, յուրաքանչյուրը՝ ձեզնից — սիրելի փոքրիկներ, յեթե միայն մեծ լինեյիք և հրացանը ձեռքում՝ կանգնած լինեյիք մարտական շարքում:

Կոմյերիտական սահմանապահ՝ Չեպուշտանով

2

Յերեխանե՛ր. ուզո՞ւմ եք իմանալ, թե ինչպես ենք մենք պաշտպանում մեր մեծ հայրենիքի սահմանները:

Մեզ մոտ — Հեռավոր Արևելքում — անանցանելի անտառներ են ու ձահիճներ: Բայց նույն իսկ այդ անանցանելի խիտ անտառներում մենք սովորել ենք գտնել թշնամիներին:

Հունվարի 30-ի մարտում, յերբ մենք մեր հրամանա-

տարի ղեկավարութեամբ անցանք գրոհի, յես վերավորվեցի աչքից: Գլուխս պտտեց, ամեն ինչ շուռ յեկավ: Կարծես մուրճերով խփում եյին գլխիս: Բայց յես այնուամենայնիվ առաջ եյի վազում, մինչև գիտակցութեանս կորցնելը:

Ուշքի յեկա առավոտյան: Չորս կողմը միջ վոք չկար: Աղմկում էր ստվարախիտ տայգան: Ընկերներս գրոհի ժամանակ ինձ կորցրել եյին, յերկար փնտրել ու վոչ մի տեղ չեյին գտել: Իսկ մարտից հետո վրա յեր հասել մութ գիշերը: Մինչև առավոտ յես մենակ ու վերավոր ընկած եմ յեղել տայգայում:

Դեռ չեյի բարձրացել գետնից, մեկ ել տեսնեմ անտառի միջից յերեք հոգի ուղիղ ինձ վրա յեն գալիս: Նրանց հագուստից յես իսկույն ճանաչեցի թշնամիներին — սահմանը խախտողներին: Մոտս վոչ մի տեսակի զենք չկար: Չեյի հիշում թե իմ ձեռքից ինչպես ե ընկել հրացանը, յայց դանդաղել չեր կարելի: Յեկողներից առաջինը բոլորովին մոտիկ էր ինձ: Խիտ թփուտների միջով թշնամիներին չեր տեսնում: Յես հանկարծակի բարձրացա թփերի միջից: Անսպասելի յերևարուցս նրա վոտը սայթաքեց ու ընկավ: Յես ընկա նրա վրա ու խլեցի նրանից հրացանը: Մյուս յերկուսը նետվեցին դեպի ինձ: Յես սկսեցի կրակել թշնամու հրացանից: Իմ հրացանն իհարկե հետո դտա տայգայում:

Վերավոր, թշնամու հետ այդ վիճակում կովի բռնվելուց բոլորովին ուժասպառ դարձած, յես ամբողջ 12 ժամ թափառեցի տայգայում մերոնց գտնելու համար: Քայլել գծվար եր ինձ համար: Ամեն յերկու քայլից վոտս առնում էր ու ընկնում եյի գետնին, բայց կտրող սառնամանիքը բարձրացնում էր ինձ: Յերբ վերջապես հասա ուղեվակը, յես ընկա գիտակցութեանս կորցրած: Ուշքի յեկա միայն հիվանդանոցում փետրվարի 2-ին:

Մեր Միութեան կառավարութեանն ինձ պարզեատրեց մարտական Կարմիր դրոշի շքանշանով:

Դժվար ե մեր աշխատանքը սահմանազրկում: Բայց քանի խորհրդային սահմանապահը կանգնած ե իր դիրքում, վոչ մի թշնամի անպատիժ կերպով չի կարող վոտքը դնել մեր հողը:

Յերեխանե՛ր: Յես ուզում եմ, վորպեսզի դուք ևս նույնպես լրիվ ու ամուր կատարեք ձեր պարտականութեանն ուսման մեջ և աճեք վորպես ավագ ընկերների արժանավոր փոխարինողներ:

Սահմանապահ՝ Պոլկովնիչենկո

ՅԵՍ ԻՆՉՈ՞Ւ ԵՄ ՍԻՐՈՒՄ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻՆ

(Յակուտացի յերեխայի պատմածը)

1

Մեր յերկիրը՝ Յակուտիան, Հյուսիսային Սառուցյալ տվկիանոսին մոտ ե գտնվում, Լենա գետի ափին: Մեր յերկիրը մեծ ե և ծածկված ե խիտ անտառներով (տայգա): Յակուտիայի տաբաններում վայրի զազաններ շատ կան՝ արջեր, սամույրներ, կղաքիսներ և այլն: Շատ կան նաև սկյուռներ:

Իմ հայրը չորս տարեկան էր, յերբ թոքախտից մեռավ պապս: Հայրս մնացել ե իր մոր հետ մենակ: Մի տարեանց մայրը կուրանում ե յերկու աչքով: Նրանք մնացել են բարեկամների խնամքին: Ամբողջ տարին սպասով եյին կերակրվում — մի բուռ ալյուր, յերբեմն ել ծառերի կեղեվը մանրած:

Մեր չըջանում միայն մի դպրոց ե յեղել, այն ել մեր գյուղում: Իննսուն կիլոմետր տարածութեան վրա ուրիշ դպրոց չկար: Դպրոցում սովորում եյին միայն տասնչորս յերեխա:

Դպրոցը գտնվում էր մի փոքր, մութ խրճիթում: Պատուհաններին ապակու փոխարեն սառույց էր դրած: Մութն ընկնելիս մոմեր եյին վառում:

Որական չորս անգամ ուսուցչուհին հավաքում էր աշակերտներին, կանգնեցնում էր սրբապատկերի առաջ ու ստիպում ուսուցչին աղոթքներ անել: Ով վատ էր աղոթում, նրան ստիպում եյին չոքել սուր փայտերի վրա:

Չորս տարվա ընթացքում հայրս սովորել էր միայն այբուբենն ու ուսական չորս աղոթք:

Հայրս այնուհետև ծառայութեան ե մտնում մի հարուստ վաճառականի մոտ, հետո արդյունաբերող վորսորդներին հետ գնում ե Բեհռային գոտում ծառայելու: Այդ աշխատանքներին գնացողներին յուրաքանչյուրի մեջքին յերեք հատ տախտակ եյին կապում, մահվան գեպքում դադար չինելու համար:

1919 թվին հայրս վերադարձավ: Այդ ժամանակ Յակուտսկում բանվորներն արդեն տապալել էյին սպիտակ գներալ Կոլչակի լուծը:

Դեռ յերկար ժամանակ տեղական կուլակներն ու վաճառականները կուլում էյին Սորհրդային իշխանութեան գեմ: Նրանց ողնում էյին սպիտակ գներալները: Իմ հորը նշանակեցին կարմիր ջոկատի պետ:

Այսպես եր պատմում հայրս:

2

Այժմ յես ձեզ կպատմեմ, յերեխաներ, թե ինչպես եմ ապրում: Իմ անունն ե Իլյա: Տասներկու տարեկան եմ: Պիաներ եմ: Ութ տարեկան էյի, վոր դպրոց մտա: Մեր շքը քանում այժմ տասնվեց դպրոց կա: Յակուտիայում այժմ բոլոր յերեխաները սովորում են: Դպրոցը նոր ե, լուսավոր, դաստիարակում ե միջանցքներում ծաղկամաններ կան: Մենք մայրենի լեզվով ենք սովորում, յակուտական նոր դասագրքերով: Ամենից շատ յես սիրում եմ ռուսերեն ե Փիզկուլտուրա:

Արդեն մի տարի յե՝ Մոսկվայումն եմ: Հայրս ուսանող ե: Այս ձմեռ նա վերջացնում ե ուսումը ե մենք Յակուտիա կվերադառնանք: Յես շտապում եմ՝ շուտով իմ ընկերներին տեսնելու:

Յես նրանց կպատմեմ Լենինի դամբարանի, Հեղափոխութեան թանգարանի մասին: Այժմ կպատմեմ մետրոյի մասին: Ինչպես գեղեցիկ ու հետաքրքրական ե, ինչպես են գնում-գալիս գետնի տակ գնացքները: Կպատմեմ կենդանաբանական այգու մասին: Ամենից շատ ինձ դուր յեկան փիղն ու կապիկները: Այս ամառ յես հանգստացա Մոսկվայի մոտ պիոներական ճամբարներից մեկում:

Փ Ի Լ Ո Ս Ը

(Կովկասյան հեֆյաթներից)

Գյուղացու մեկն ունենում ե մի հիմար տղա՝ անունը Փիլոս:

Մի որ, հանդից վերադառնալիս, սա մի ասեղ ե գրտնում ճանապարհին, քցում ե սայլի մեջ, վոր բերի տուն: Ու, տուն հասնելով, մորն ուրախացնում ե, թե քեզ համար ասեղ եմ բերել: Բայց վորքան փնտրում ե՝ ասեղը չի գտնում սայլի մեջ: Այդ ժամանակ մայրը հանդիմանում ե նրան.

— Հիմար, — ասում ե, — գտած ասեղը կրծքին կխրեն, վոչ թե սայլի մեջ կըքցեն:

— Լավ, մյուս անգամ եղպես կանեմ, — ասում ե Փիլոսը:

Մյուս անգամ ել մի կատվի ձագ ե գտնում. աշխատում ե կրծքին ամրացնել ու դրա համար այնքան ե չարչարում կատուին — խեղճը սատկում ե:

Գալիս ե մորը պատմում: Մայրն ասում ե.

— Հիմար, կատուին «փիսի-փիսի» կանեն, վոչ թե կրծքին կխրեն:

— Լավ, մյուս անգամ եղպես կանեմ:

Մի քանի որ հետո նապաստակ ե պատահում: Փիլոսը սիրով «փիսի-փիսի» ե կանչում: Յեվ քանի նա կանչում ե, նապաստակը փախչում ե հեռու:

Գալիս ե մորը պատմում, թե ինչպես ե նապաստակը փախել:

— Ա՛յ-ա՛յ-ա՛յ-ա՛յ, — ասում ե մայրը, — նապաստակին փայտով ու հրացանով կխփեն, վոչ թե «փիսի-փիսի» կանեն:

— Յեկող անգամ եղպես ել կանեմ, մայրիկ:

Յեկող անգամ լաց լինելով գալիս ե տուն:

— Ի՞նչ ե պատահել, — հարցնում ե մայրը:

— Գնացի դաշտ մի հորթ պատահեց, փայտով խփեցի, վրա կոտրեց. հնձվորները բռնեցին — ծեծեցին ինձ:

— Ա՛յ-ա՛յ-ա՛յ, — ասում է մայրը, — հորթին փայտով չեն խփի, իսկ հնձվորի պատահելիս՝ «բարի աջողում» կասեն:

— Լավ, մայրիկ, մյուս անգամ եղպես կանեմ:

Մյուս անգամ հանդիպում է մի մեծ խումբ մարդկանց, մոր մեռել եյին տանում թաղելու:

— Բարի աջողո՛ւմ, բարի աջողո՛ւմ, — գոռում է Փիլոսը:

Մարդիկ բռնում են դրան՝ մի լավ ծեծում, և նա լալով գալիս է ելի մորը պատմում գլխով անցածը:

— Վայ, աղա, — ասում է մայրը, — մեռելի պատահելիս՝ կտխրեն, լաց կլինեն:

— Լավ, յեկող անգամ եղպես կանեմ, — խոստանում է Փիլոսը:

Մի քանի ժամանակ հետո, գյուղով անցնելիս, տեսնում է հարսանիք, բախում մարդիկ, կանայք պարում են, ուրախանում: Փիլոսը մոտենում է, ուրախության ու պարի տաք ժամանակը՝ գլխարկը վերցնում է ու բարձրաձայն լաց լինում:

Մարդիկ բռնում են դրան մի լավ ծեծում ու հարսանիքից դուրս անում:

Իսկ Փիլոսը գալիս է տուն ու բոլորը մորը լալով պատմում:

— Վայ, Փիլոս, վայ, — ասում է մայրը: — Տերտեր տեսնելիս՝ գլխարկը կվերցնեն, կչոքեն և կասեն «որհնի, տեր հայր»:

— Մյուս անգամ, մայրիկ, եղպես կանեմ:

Յեվ շատ չի անցնում, մի որ ել Փիլոսը գնում է անտառ: Շատ է գնում անտառում, քիչ է գնում, մեկ ել պատահում է մի արջի:

Փիլոս դուր Փիլոս:

Արջին տեսնում է թե չե — անմիջապես ծունկ է չորում ու ասում.

— Որհնի, տեր-հայր, որհնի:

Արջը թաթերով խփում է դրան, քցում գետին ու վրան նստում:

Փիլոսը վախից լռում է ու շունչը քաշում իրեն:

Արջը տեսնում է ել ձայն — շունչ չկա — թողնում է հեռանում:

Իսկ Փիլոսը վեր է կենում ու մինչև տուն վազելը մեկ է անում:

Ու այդ որվանից, ասում են, Փիլոսը խելոքացել է, ել հիմարություններ չի անում:

Գ. ԶԱՐԵՑԿԻ

ՊԱՏԱՎԱԾՔՆԵՐ ԲԵՎԵՌՈՒՄ ԶՄԵՌՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ ՏԵՂ ՀԱՍԱՆՔ

Մեզ իջեցրին Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի Բելի կղզու ամայի ափը: Կղզին գտնվում էր Հյուսիսային լայնության 74-րդ զուգահեռականի վրա: Առափնյա բնակիչներն այդ կղզին անվանում են Սեր-ո, վոր նշանակում է սառուցե կղզի:

Մենք յերկար ժամանակ նայում եյինք հեռացող շողենավի հետևից:

Ռազիստ Պետյան թևքերը թափահարում էր նավի կողմն ու աղաղակում.

— Ռազիոն կսարքենք՝ ամբողջ աշխարհը կթռչեմ:

Մենք հրացանի վերջին հրաժեշտի համազարկը տվինք ու ցրվեցինք աշխատանքի: Աշխատանք շատ կար. հարկավոր էր գույքը դասավորել, փայտ պատրաստել, բնակարան կառուցել...

Հետևյալ որը ձյուն տեղաց, ուժեղ սառնամանիք սկսվեց, իսկ մի շաբաթ անց՝ կղզին բոլոր կողմերից կաշկանդվեց սառույցով: Վրա հասավ բևեռային գիշերը: Պարզ յեղանակին յերկնքում բռնկում ու մարում եյին Հյուսիսային շողշողուն, հրավառ շերտերը: Այդ տեսարանից աչք հեռացնել չեր կարելի, և մենք հիացած՝ ժամերով կանգնում եյինք սառնամանիքում:

Թվում եր, թե մենք կարված եյինք ամբողջ աշխարհից:

Մահայն, չեյինք տխրում: Բոլորս զբաղված եյինք. կարում եյինք, հղկում, պատերի ճեղքերը խծուծում, ապակի գցում, թիթեղյա վառարաններ եյինք շինում և դիտական աշխատանք կատարում: Հարկավոր եր պարզել, թե ծովային հոսանքներն ամենից շատ վո՛ր կողմն են գնում, վո՛ր կողմն են շարժվում սառույցները, վորքա՛ն ժամանակամիջոցում են սկսվում ծովի մակընթացությունն ու տեղատվությունը, ամենից շատ վո՛ր կողմից ե փչում քամին, յե՛րբ են լինում մառախուղ, սառնամանիք ու ձյուն:

Այնուհետև հարկավոր եր իմանալ, թե ի՛նչ կղզի յե այդ, ի՛նչ գազաններ ու թռչուններ են ապրում այնտեղ, ի՛նչ բույսեր են աճում, ի՛նչ ձկներ կան ծովում:

ԱՐՁԸ ՍԱՌՈՒՅՑԻ ՎՐԱ

Առաջին անգամ մեզ սպիտակ արջ պատահեց գեռևս ճանապարհին: Մենք Արկտիկա եյինք գնում ծովով, մի մեծ շոգենավով, իսկ «Միչան»¹ լողում եր մի սառույցի բեկորի վրա: Մառույցը շատ ավելի մեծ եր մեր շոգենավից: Մենք հիանալի տեսնում եյինք, թե ինչպես արջը հանգիստ նայում ե մեզ, ինչպես տանտերը կնայի անկոչ հյուրերին: Նորեկներից մեկը ցանկանում եր կրակել, բայց չթողին: Ինչո՞ւ կրակել, միևնույն ե վերցնել չես կարող: Բոլորս ծիծաղում եյինք, կանչում.

— Միչա՛, ո՞ւր ես գնում:

— Միխալ Պոտապի՛չ, ընդունիր հյուրերին:

Բայց արջը հանգիստ կանգնել եր սառույցի վրա և զանգաղ ու հանդիսավոր կերպով գլուխն եր որորում:

ԱՐՁԸ ՅԵՎ ՍՊԻՏԱԿԵՂԵՆԸ

Ձմեռողների մեջ կին չկար: Մեզ համար ամենազժվար աշխատանքն սպիտակեղեն լվանալն եր:

Այդ գործը դյուրացնելու համար մեր բարեսիրտ բրժիչի Արկադի Պետրովիչը մի նոր միջոց հնարեց. նա

¹ Ռուսների մեջ ընդունված ե արջին Միչա անվանել: Մ. Թ.

սպիտակեղենը լցրեց ջրով լի մի ամանի մեջ, ոճառը կտրրտեց գցեց մեջը, վրան ել ավելացրեց սողա և նաշատիրի սպիրտ: Ասլա այդ ամենը յեռացրեց ու յերկու որ ու գիշեր թողեց ամանում:

Նրա կարծիքով ամբողջ կեղտն ինքն իրեն պետք ե դուրս գար, առանց լվանալու:

Բայց յերբ նա սկսեց սպիտակեղենն ամանից հանել, պարզվեց, վոր բոլոր շորերը սեացել են:

Նա սոսկումով ամանից հանում եր սև ու կեղտոտ սպիտակեղենը և հայհոյում, իսկ մենք նայում եյինք նրան և ուրախ ծիծաղում:

— Ա՛յ թե լվացի՛ր:

— Ա՛յ քեզ նոր ձևի լվա՛ցք:

Բանից դուրս յեկավ, վոր նա սպիտակեղենի հետ ամանն ե գցել նաև մի սև խալաթ, վոտքի փաթաթաններ և ելի մի ինչ վոր սև շոր:

Սպիտակեղենն ավելի կեղտոտ դուրս յեկավ, քան առաջ եր:

Բայց նրան մի ուրիշ փորձանք ել եր սպանում. նա սպիտակեղենը փռեց չորանալու և գիշերը դուրսը թողեց: Իսկ այդ գիշեր արջը յեկել եր կայան, նրա բոլոր սպիտակեղենը պատառոտել ու ցրիվ տվել հեռու, ձյունների մեջ:

Պետք եր տեսնել, թե Արկադի Պետրովիչն ինչպես եր անեծքներ ու հայհոյանքներ թափելով շրջում ու հավաքում սպիտակեղենի ցրիվ տված ծվենները:

Մի ամբողջ ամիս մեզ զբաղեցնում եր այս պատմությունը:

ԲԵՎԵՌԱՅԻՆ ՁՄԵՌ ՊԱՊԻ ԿԱՏԱԿՆԵՐԸ

Մի անգամ ահա թե ինչ պատահեց: Ձիեր լծած սահնակով յես գնացի կղզու խորքը: Խիստ սառնամանիք եր: Իմ մորուքը ծածկվեց յեղյամով և չուտով դարձավ միահագին սառցալուրա: Յես զանգաղ, ընդհատումներով սկսեցի քիթս սրբել թեքով: Յեվ հենց այդ ժամանակ ել տեղի ունեցավ անախորժ բանը: Սառնամանիքը ճանկեց. թեքս սառավ, կպավ բեխիս: Վոչ մի կերպ պոկել չկարողացա:

ցավ եր տալիս: Ստիպված յեղա թեւ դուրս քաշել թեւքիս միջից և ծոցումս պահել, իսկ թեւքս այնպէս ել մնաց բեխերիս ու մորուքիս կպած, քթիս առաջ կախված: Յես շտապ տուն վերադարձա, վազեցի խոհանոց, վառարանի մոտ թեւքս հալեցնելու: Ուզում եյի այնպէս անել, վոր վոչ վոք ինձ այդ վիճակում չտեսնի, բայց չհաջողվեց: Բոլորը վրա վազեցին և— ա՛յ թե ծիծաղեցին հա՛:

ՄՈԼՈՐՎԵՑԻ

Վրա հասավ բեռնային յերկարատե ցերեկը: Մի անդամ յես վորսից տուն եյի վերադառնում: Մառախուղ եր: Մառախուղը փաթաթվում եր ինձ, թափանցում գուլպաներիս ու շապիկիս մեջ: Մշուշը ծածկում եր ամեն ինչ և տասը քայլի վրա գտնվող առարկաներն անտեսանելի յեր դարձնում: Մինչև մեր բնակավայրը հինգ կիլոմետրից ավելի յեր: «Մեկ ժամվա ճանապարհ», մտածում եյի յես:

Սկզբում տեսանելիութունը չավ եր: Բայց մի տասնըհինգ րոպե չանցած՝ ամեն ինչ մշուշի մեջ թաղվեց: Յես ուղղութուն վերցրի հիշողությամբ: Արդեն մոտ յերեք ժամ եր անցել, իսկ բնակավայրը դեռ չի յերևում: Սկսեցի պտտվել մեկ այս կողմ, մեկ՝ այն: Բայց այդպէս կարելի չե հեռանալ ով գիտե, թե վորքան: Ա՞յս ինչ բան ե: Ո՞ւր գնալ:

Յես կանգ առա: Շարժական վրանս խփեցի ու սկսեցի սպասել: Յերկու զալետ կերա, մի կտոր պաքսիմատ, մի բուռ ձյուն «խմեցի» և շուտով քուն մտա: Արթնացա սաստիկ ցրտից: Ամբողջ մարմինս դողում եր: Վրանից դուրս յեկա, վորպեսզի շարժումներ անեմ և զեթ փոքր ինչ տաքանամ: Մառախուղն սկսեց նոսրանալ: Մշուշն քողի միջով սկսեց լույս ցոլալ: Հանկարծ մի մութ սիլուետ տեսա: Մըտածում եմ. «Այս ի՞նչ հրաշք ե»: Մի քանի քայլ արի դեպի այդ մութ կետը և շենքերի գծագրությունը նկատեցի: Ավելի մոտեցա և ուրախացա. այդ մեր տունն եր՝ ընդամենը մի քանի քայլի վրա իմ վրանից:

Պատահեց, վոր մի անգամ յես ու կայուրը (վորսորդը) գնացինք դազան վորսալու: Մենք արդեն հեռու, ծովումն եյինք: Զրի միջից սկսեցին յերևալ փոկերի, ծովացուլերի և ծովային նապաստակների գլուխներ: Յես, հենց այն ե, ուզում եյի կրակել, հանկարծ յերևաց մի մութ, դեպի ցած ծոված ժանիքներով: Ծովացո՛ւլ: Կայուրը մոտոը կանգնեցրեց: Ծովացուլը ջրի տակ թագնվեց: Մենք յերկուսս ել հրացաններս պտորաստեցինք ու սկսեցինք սպասել դազանի յերկրորդ յերևալուն: Շուտով գլուխը նորից յերևաց: Յես կրակեցի, բայց ծովացուլը սուզվեց ջրի մեջ, վորի յերեսին մի կարմիր բիծ մնաց:

— Վիրավորեցի՛ր,— ասաց կայուրը և սկսեց մոտոը գործի գցել:

— Շուտ ափի մոտ հասնենք,— գոչեց նա: Յես սկսեցի յերկու պահեստի թիերով թիավարել:

Ծովացուլը սիրում ե արևի տակ տաքանալ: Յերը նա դուրս ե գալիս սառույցի վրա քնելու, վտանգավոր չէ: Սակայն բաց ծովում նրան հանդիպելը շատ ե վտանգավոր: Մանավանդ, յեթե վորեւե բանով նրան բարկացնես կամ վիրավորես: Այդ դեպքում նա կհետապնդի հակառակորդին:

Մենք իսկ և իսկ այդպիսի վտանգավոր դրության մեջ բնկանք: Վիրավոր ծովացուլը ջրից դուրս պրծավ և կատաղած ցուլի պէս մոնչաց: Դրանով նա մյուս ծովացուլերին ոգնության եր կանչում:

Շուտով ծովացուլերի մի ամբողջ նախիր յերևաց: Իրարանցում սկսվեց: Ծովացուլերը հրհրում եյին իրար, ատամները չրխկացնում, կովում, իրար կծում և հուսակրտուր մոնչում: Մեր մակույկը թռչում եր արիքները կտրելով: Ծովացուլերը հետապնդում եյին մեզ: Մենք արդեն զգում եյինք մակույկի կողերին տրվող հարվածները:

Զուրն սկսեց մակույկի մեջ հոսել: Մի րոպե ևս— և կործանումն անխուսափելի կլիներ: Բայց մենք լարեցինք մեր վերջին ուժերը և շուտով ափ ցատկեցինք: Մի քանի ծովացուլ դուրս ցցվեցին ջրից: Մենք կրակեցինք: Կենդա-

նիներից յերկուսն անշնչացած ընկան: Մենք հարպուններով նրանց վեր քաշեցինք ու կապեցինք մակուկին: Մակուկի կողի ճեղքն ել նորոգեցինք և ափի մոտով նավարկեցինք դեպի կայան:

ՎԻՐԱՎՈՐ ՃԱՅԵԿԸ

Մի անգամ խոհարարը պատահամբ մի ճայեկ վիրավորեց: Նա այդ ճայեկը տուն բերեց, վերքը լվաց, յողքսեց ու փաթաթեց: Մի քանի օրից հետո ճայեկն առողջացավ և մենք նրան ազատ արձակեցինք: Դրանից հետո նա հաճախ հյուր եր գալիս մեզ և մենք սիրով դիմավորում էյինք նրան, վորպես վաղեմի ծանոթի:

Մի ուրիշ անգամ յես ուզում էյի մի կրակոցով մի գուլգ սազ սպանել, բայց միայն մեկին կպավ: Սպանվածն արու սազն եր: Մարի սազը վեր թռավ և սկսեց իմ գլխավերևը պտույտներ անել:

— Պի-կուրլի, պի-կուրլի, — ճչում եր նա:

Դրանից հետո շատ օրեր անցան, բայց նա միշտ գալիս եր նույն տեղը, կանչում ու վողբում իր ընկերոջ կորուստը:

Արեգակն սկսեց ավելի հաճախ յերևալ: Բայց ձմեռը դանդաղորեն եր հեռանում: Վերջին բուքն ավարտվեց հունիսի 26-ին և դրանից հետո սկսվեց ամառը:

Թռչուններն սկսեցին բուն դնել և շուտով ճուտեր յերեվացին: Ձյունը հարվեց, տեղ-տեղ սկսեց թարմ խոտ յերեվալ:

Սպիտակ, անծայրածիր անապատի տեղ փոված էյին մուգ կանաչ բլրաշատ բարձրություններ ու հովիտներ: Լըճերը բացվեցին:

Մենք շատ վտրս էյինք անում. ձվեր էյինք հավաքում և վորսի թարմ մսով էյինք սնվում: Իսկ ծովում դեռ նույնքան ամուր սառույց եր կանգնած: Սառցասարերը չարժվելու միտք ել չունեյին: Այդ մեզ վախեցնում եր: Յեվ միայն ոգոստոսի առաջին կիսին հյուսիս-արևմուտքից սկսեցին ասեղ ամպեր յերևալ:

Ութ օր մրրիկը մոլեգնում եր: Երջապատում ամեն

ինչ աղմկում եր, դղրդում ու ճարձատում: Սառցի վիթխարի կտորները ցցվում էյին կողքի վրա և վայր ընկնում խլացուցիչ դղրդյունով:

Իսկ ոգոստոսի 12-ին ծովը մաքուր եր: Ծուտով շողենավեր յեկան:

Սեպտեմբերին թռչունները նորից չվեցին: Ջուրը կըրկին սկսեց սառչել: Ծովում սկսեցին հաճախակի յերևալ լողացող սառույցներ: Հյուսիսային բևեռից ցուրտ եր գալիս, վորպեսզի նորից տասն ամսով կղզին կաշկանդի սառցե ողակի մեջ:

ՍՏԱՅՅԻ

ԻԱԶ ՖՐՈՒՆԶԻԿԸ

Փրունգիկենց գյուղը սահմանի մոտ եր գտնվում: Փրունգիկի հայրը գյուղի ծայրին մի այգի ուներ, վորտեղ Փրունգիկը լիմոնի փոքրիկ ծառեր եր տնկել:

Փրունգիկն առավոտները շուտ եր վեր կենում, վերցնում եր ցնցուղը և այգին շտապում: Այգում նա մեկ-մեկ գննում եր բոլոր ծառերը, ջրում եր, պոկում եր նրանց շուրջը բուսած մտլախոտը:

Մի օր Փրունգիկը սովորականից վաղ եր վեր կացել և շտապում եր ջրելու իր լիմոնի փոքրիկ ծառերը: Նա արագ քայլերով այգի գնաց, ստուգեց բոլոր ծառերը, ջրեց և ուղում եր տուն վերադառնալ, յերբ հանկարծ այգու ցանկապատի հետևից նրան մոտեցավ մի անծանոթ մարդ, վորը Փրունգիկին շատ վախեցրեց:

— Սա ձեր այգին ե՞, փոքրիկ ջան, — քնքուշորեն հարցրեց անծանոթ մարդը: Փրունգիկը անծանոթի սիրալիր վերաբերմունքից սիրտ առավ:

— Այո, մեր այգին ե, — պատասխանեց Փրունգիկը:

— Անունդ ի՞նչ ե:

— Փրունգիկ:

— Ա՛յ լավ անուն ե:

— Իու ո՞վ ես, — հարցրեց Փրունգիկը:

— Յե՞ս:

— Այո, դու:

— Յես... յես այգեգործ եմ: Երջանի կենտրոնից եմ յեկել այգիները ստուգելու համար: Գիտե՞ս, փոքրիկ ջան, յես շատ քաղցած եմ: Ուզում եմ այստեղ մի քիչ հաց ուտել և հանգստանալ, արի ինձ հետ դու ել հաց կեր:

— Վոչ, յես քաղցած չեմ, — պատասխանեց Պրոնզիկը:

Անձանոթը սկսեց Պրոնզիկին հարցեր տալ, թե այդ գյուղում շամ գինավորներ կա՞ն, թե Պրոնզիկի հայրը ի՞նչով է զբաղվում:

— Իսկ դու ինչո՞ւ գյուղ չես գնում — կասկածանքով հարցրեց Պրոնզիկը:

Անձանոթ մարդը անընդհատ շուրջն էր նայում և վեր եր թռչում ամեն մի փոքրիկ ձայնից:

— Նրա համար, սիրուն բալիկս, վոր յես շտապում եմ, ուզում եմ հենց այստեղ ստուգել այգիները և շրջանի կենտրոնը վերադառնալ, հիմա հասկացա՞ր:

Պրոնզիկը շատ կասկածեց անձանոթ մարդու վրա, վորովհետև նրա զեմքը, շորերն ուրիշ տեսակ էյին: Նա մտածեց, վոր այդ մարդը սպիտակների կողմից յեկած կլինի, վորպեսզի մեր յերկրին վնաս հասցնի: Իրա համար Պրոնզիկը գյուղ վազելով վոչ թե իրենց տուն գնաց, այլ թեքվեց դեպի սահմանապահների գորանոցը, գտավ հրամանատարին և ամեն բան պատմեց:

— Գնանք, փոքրիկ Պրոնզիկ, գնանք տեսնենք այդ ի՞նչ մարդ է, — ասաց հրամանատարը: Կարմիր հրամանատարն ու Պրոնզիկը դեպի այգին դիմեցին: Այգում հրամանատարը հանեց ատրճանակը և թագնվեց, իսկ Պրոնզիկն սկսեց կանչել:

— Քեռի՛:

Անձանոթ մարդը տեսնելով, վոր Պրոնզիկի հետ վոչ վոք չկա, ուրախացած դուրս յեկավ ծառի հետևից, բայց այդ րոպեյին լավեց հրամանատարի խրոխտ ձայնը:

— Կանգնիր, ձեռներդ վե՛ր:

Անձանոթ մարդը տեսնելով հրամանատարին և դեպի

իրեն ուղղած ատրճանակը, վախենալով ձեռները վեր բարձրացրեց:

Հրամանատարն ու Պրոնզիկն անձանոթ մարդուն գյուղ տարան: Այնտեղ պարզվեց, վոր այդ մարդուն սպիտակներն էյին ուղարկել մեր սահմանը, վոր նա մեր յերկրին վնաս հասցնի, — գործարաններ հրդեհեր, կամուրջներ պայթեցներ:

Պրոնզիկն իր քաջության համար նվերներ ստացավ ու բոլոր սահմանապահները սիրով էյին խոսում նրա մասին:

Հ. Խ. ԱՆԴԵՐՍԵՆ

ԱՂՋԻԿՆ ՈՒ ԼՈՒՑԿԻՆԵՐԸ

Ողբ ցուրտ էր: Ձյուն էր գալիս: Գիշերը հեռու չեր: Տարվա վերջին յերեկոն էր, նոր տարվա նախընթաց օրը:

Մի խեղճ փոքրիկ աղջիկ, գլխաբաց և բոբիկ, այդ ցրտի և մթության մեջ, փողոցից անցավ:

Փոքրիկ աղջիկը քայլում էր բոբիկ վոտներով, վորոնք կարմրել և կապտել էյին ցրտից: Նա իր հին գոգնոցի մեջ մեծ քանակությամբ լուցկի ուներ:

Այդ օրը նրա համար մի վատ օր էր, վորովհետև վոչ վոք նրա լուցկիներից չեր գնել և նա մի կոպեկ անգամ չուներ: Նա շատ քաղցած էր և խղճալի կերպարանք ուներ:

Ձյունի քուլաները թափվում էյին նրա յերկար խաբտյաչ մազերի վրա, վորոնք նրա վզի շուրջը սիրուն խոպոպներ էյին կազմում: Բայց նա չեր ել մտածում իր խոպոպ մազերի մասին:

Պատուհանները լույսից չողջողում էյին, կերակուրների հոտը փողոցը լցրել էր:

Նոր տարվա նախօրը գիշերը, ահա նա ինչի մասին էր մտածում: Յերկու տների մեջտեղում նա նստեց և կուչ յեկավ: Տուրաը հետզհետե նրա վոսկորների մեջ էր թափանցում, բայց նա չեր համարձակվում տուն վերադառ-

նալ, վորովհետև մի տուփ լուցկի անգամ չեր ծախել և անկարող պիտի լիներ մի կոպեկ տուն տանելու: Հայրը նրան պիտի ծեծեր, և հետո իրենց տունն ել նույնչափ ցուրտ եր, վորչափ փողոցում: Նրանք ներքին հարկում էյին ապրում: Թեպետ տան խոշոր ճեղքերը հարգով և փախսով ծածկել էյին, բայց քամին դարձյալ ներս եր մտնում:

Իր փոքրիկ ձեռքերը ցրտից թմրել, գրեթե սառել էյին: Ափսոս: Յեթե մի փոքրիկ լուցկի վառեր նրանց տաքացնելու համար. յեթե համարձակվեր մի տուփ, միայն մի տուփ վերցնելու և մի լուցկի պատին քսելով իր մատները տաքացնելու... նա չկարողացավ համբերել, վերցրեց մի լուցկի... չըրիկ... նա մի տաք և պայծառ լույս արձակեց: Փոքրիկ ձեռքը նրա վրա բռնեց: Ինչ տարրինակ լույս եր: Փոքրիկ աղջկան թվաց, թե նստել եր փայլուն կափարիչով ծածկված յերկաթյա մի մեծ վառարանի առաջ, վորտեղից կրակը հիանալի կերպով ցոլցոլում եր և տաքացնում: Փոքրիկն իր վոռքերը յերկարում եր տաքացնելու համար, յերբ բոցը մարեց, վառարանն անհետացավ: Նա նստել եր վառված լուցկու մի ծայրը ձեռքում:

Նա վառեց մի յերկրորդ լուցկի, վորը փայլեց և պատի վրա, այնտեղ, ուր լույսի ճաճանչն ընկավ, շղարչի նման թափանցիկ դարձավ: Փոքրիկին թվաց, թե նշմարում ե մի սենյակ, վորի մեջտեղում գրված ե սեղանը՝ սպիտակ ծածկոցով և հախճապակյա չլացուցիչ ամաններով: Սեղանի վրա տապակած մի սառ կար, վորից բուրում եր մի ախորժեղի հոտ: Հանկարծ՝ սազը պատառաքաղը և դանակը կռնակին խրած՝ պնակից թռավ և ընկավ ուղիղ խեղճ աղջրկա առջև: Լուցկին մարեց և նա իր առջև ցցված տեսավ միայն թանձր և ցուրտ պատը:

Նա վառեց մի յերրորդ լուցկի: Ու անմիջապես, մեկ ել տեսավ, վոր նստել ե մի շքեղ տոնածառի տակ: Այդ տոնածառը շատ ավելի հարուստ և մեծ եր քան այն, վոր տեսել եր անցյալ տարի, մի հարուստ վաճառականի խանութում: Կանաչ ճյուղերի վրա բյուրավոր մոմեր էյին վառվում, և դույնդույն պատկերներ, նման այն պատկերներին, վոր զարդարում են վաճառատների պատուհանները, կարծես ժպտում էյին նրան: Փոքրիկը յերկու ձեռքերը

բարձրացրեց: Լուցկին մարեց: Տոնածառի բոլոր մոմերը բարձրանում էյին, բարձրանում, և նա նկատեց շուտով, վոր նրանք աստղեր էյին: Նրանցից մեկը վայր ընկավ և յերկնքի վրա թողեց մի յերկար, լուսավոր գիծ: Նա դարձյալ մի լուցկի վառեց. նրա շուրջը լուսավորվեց ցերեկվա նման և այդ լույսի մեջ տեսավ իր տատին, կանգնած իր առաջ ժպտադեմ և շողշողուն: «Տատ, դոչեց փոքրիկը, տար ինձ: Յերբ լուցկին մարի, գիտեմ, վոր դու այստեղ չես լինի, դու ել կանհայտանաս, ինչպես յերկաթյա վառարանը, ինչպես տապակած սազը, ինչպես գեղեցիկ տոնածառը»:

Նա արագությամբ վառեց մնացած լուցկիները, վորովհետև ուզում եր անպատճառ տատին իր մոտ պահել, և լուցկիները ցերեկվանից ավելի լույս տարածեցին:

Վոչ մի ժամանակ իր տատն այդչափ մեծ և այդչափ գեղեցիկ չեր յեղել: Նա փոքրիկ աղջկան առավ իր բազուկներին մեջ, և յերկուսը միասին ուրախ, գլարթ, լույսի միջից թռան, վե՛ր—վե՛ր, բա՛րձր—բա՛րձր, ուր վոչ ցուրտ, վոչ քաղց և վոչ ել վիշտ կար:

Բայց յերբ սառն առավոտը ծագեց, փոքրիկ աղջիկը՝ այստեղ բոլորովին կարմրած, ժպիտը չըթնեցին, յերկու տների մեջտեղի անկյունում նստել եր... մեռած. մեռած ցրտից, տարվա վերջին գիշերը:

Նոր տարին ծագեց փոքրիկ մարմնի վրա, նստած այնտեղ, լուցկիներին մեջտեղում:

«Նա ուզեցել ե տաքանալ».— ասաց մի անցորդ: Բայց վոչ վոք չիմացավ այն գեղեցիկ բաները, վոր նա տեսել եր և վոչ վոք չգիտեր թե ինչ շքեղությամբ իր պառավ տատի հետ դիմավորեց նոր տարուն:

Լինա Ողենան Իսպանական հերոս Ժողովրդի հարազատ աղջիկներից մեկն էր: 1936 թվի սեպտեմբերի 20-ին Լինա Ողենան մեռավ հերոսի մահով: Գրենառչա քաղաքի մոտ տեղի ունեցած կռիվների Ժամանակ կոմյերիտուհի հրամանատար Լինա Ողենան առաջնորդում էր իր զորամասը: Նա անվախ էր ու խիզախ — քաջի նման կռվելով առաջ գնաց, իսկ նրա զորամասը յետ մնաց: Մեկ էլ հանկարծ Լինան նկատեց, վոք ինքը չըջապատված է թշնամիներով: Հասկացավ իր դրուժյունը, չվախեցավ, չտատանվեց, բայց մի՞նչեց թանկ ծախել իր կյանքը: Նա դիտեր, վոք թշնամիների ձեռքը պետք է ընկնի, բայց կանգ առավ, չոգեց, իր ունեցած բոլոր գնդակներից մեկը պահեց ծնկի տակը և մյուս բոլոր գնդակներից ամեն մեկով մի Փաշիստ սպանեց: Վերջին, պահած գնդակով վերջ տվեց իր յերիտասարդ ու վառվռուն կյանքին: Թշնամու ձեռքն ընկավ նրա անշունչ մարմինը միայն:

Կես ժամ հետո նրա ջոկատը վրա հասավ: Իր սիրելի հրամանատարի դիակը տեսնելով, ջոկատը կատաղի հարձակվեց թշնամու զորամասի վրա և վոչ մեկին կենդանի չթողեց: Այս վերջին հերոս աղջիկ դիակը և տարան:

Լինա Ողենայի մահը մեծ ցավ պատճառեց վոչ միայն Իսպանիայի, այլ և ամբողջ աշխարհի բանվորներին ու նրանց զավակներին:

Մեր՝ Սորհրդային յերկրի բոլոր յերեխաները կարդացին, իմացան Լինա Ողենայի կյանքի և հերոսական մահվան մասին: Բոլորը սիրում ու հարգում են նրա անմահ հիշատակը:

Այդ սիրո ապացույց է Լինա Ողենայի մորը գրված՝ 9 տարեկան Ասուհա Մաուերի նամակը, Սիմֆերոպոլ քաղաքից:

Սիմֆերոպոլի 10-րդ դպրոցի աշակերտուհի, 9 տարեկան Ասուհա Մաուերը մարտի 16-ին նամակ է եղարկել Բարսելոնա, Փաշիստ խռովարարների դեմ ունեցած կռիվներում հերոսաբար ընկած կոմյերիտուհի Լինա Ողենայի մորը:

Նա գրել է.
«Սիրելի մորաքույր Ողենա.

Մեծ դժբախտություն է պատահել մեզ: Բայց դու մի լար: Հանրապետական Իսպանիայում նույնպիսի ուրախ կյանք կլինի, ինչպես մեզ մոտ: Ելի մի՛ լար նրա համար, վոք դու, քո սևաչյա Լինայի փոխարեն, ունես կապուտաչյա Լինա: Դա իմ քույրն է — Լինա Մաուերը: Նա ծնվել է անցյալ տարվա ոգոստոսին, յերբ քո Լինան հերոսաբար ընկավ Փաշիստների դեմ կռվելիս: Յեվ ահա այն Ժամանակ յես ու մայրիկս վորոչեցինք մեր փոքրիկին Լինա անունը յես, վոք պահպանենք քո հերոսուհի Լինայի հիշատակը և կարեկցենք ձեր վշտին:

Վողջ յեղիր, թանկագին մորաքույր Ողենա: Մի մոռացիր, վոք դու մի Լինա էլ ունես»:

Զ Վ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք

ԽՆԿՈ ԱՊԵՐ

ՃՊՈՒՌՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆՔ

Թսի-վոի

Մի ճպուռ,

Վողջ ամառը

Շուռ ու մուռ,

Յերգեց, ճոռաց,

Ճոճոռաց:

Մին էլ, ը՛հը—

Ձմեռը

Փռեց իրա

Թևերը,

Բացեց գորգն

Սպիտակ,

Դաշտերն առավ

Ձյունի տակ:

Անցան պայծառ

Որերը.

Ել վո՞րն առեմ,

Ել վո՞րը,

Յերբ ամեն մի

Թփի տակ

Թե՛ սեղան կար,

Թե՛ ոթ յակ:

Յեկան որեր

Յրտաչունչ,

Ճպուռն ընկավ

Էուռ ու մուռնջ.

Քաղցած փորին
Եւ ի՞նչ յերգ—
Յուրոր տարավ
Վոտ ու ձեռք:
Զը՛նգը-զը՛նգը
Դողալով,
Ծա՛նը-ծա՛նը
Սողալով,
Նա մըջյունին
Ասում եր.
— Գլխիդ մատաղ,
Սանամեր,
Մի ճար արա
Շունչ առնեմ,
Յրաից, սովից
Չմեռնեմ.
Կերակրի,
Տաքացուր,
Մինչև դարուն,
Ապրեցուր:
— Ի՞նչ խաբար ե,
Սանիկս,
Չարմանում եմ,
Չանիկս,
Չաչխատեցի՞ր
Ամառը,
Ասա՛, ի՞նչ եր
Պատճառը:
— Եղսկես բանի,
Սանամեր,
Ել ժամանակ
Ո՞վ ուներ.
Են խոտերում
Բուրավետ
Յերգում էյինք
Մերոնց հետ...
— Ուրեմն դո՞ւ...

— Այո՛, յես
Վողջ ամառը
Դեն ու դես,
Յերգում էյի
Մշտապես:
— Յերգո՞ւմ էյիր...
Շա՛տ բարի:
Այժմ ել բոնի
Վեջվերի,
Քամին ծափ տա՛
Դու սլարի

ԾԻՏԻԿՆԵՐԻ ԶՐՈՒՅՅԸ

Ծիտը ծախն ասաց՝

— Ո՞ւր ե ճուտդ, ծի՛տ:

Ճուտը բնից գլուխն հանեց,

Ասաց՝ — ճի՛տ...

ԱՌՅՈՒԾՆ ՈՒ ՄԱՐԴԸ

Մի հզոր առյուծ նստել էր ճանապարհին: Ամեն տեսակ
զազաններ գալիս էյին և դողալով անցնում այդ ճանապար-
հով:

Առյուծը հարցրեց նրանց.

— Ինչո՞ւ եք փախչում, այդ ո՞ւմ ահից եք զարհուրած
փախչում:

Նրանք պատասխանեցին.

— Դու ել փախիր, վորովհետև ահա գալիս ե մարդը:

Առյուծն ասաց.

— Ո՞վ ե մարդը, ի՞նչ ե նա, վո՞րն ե նրա ուժը և ի՞նչ
կերպարանք ունի նա, վոր փախչում եք նրանից:

Նրանք պատասխանեցին.

— Կզա քեզ կտեսնի և «վայ» քո օրին:

Ահա հանդից գալիս ե մի հողազործ մարդ:

Առյուծն ասաց նրան.

— Մի՞թե դու յես այն մարդը, վոր փախցնում ես
զազաններին:

Նա ասաց.

— Այո, յես եմ:

Առյուծն ասաց.

— Արի կովենք:

Մարդն ասաց.

— Լավ, կովենք, բայց քո զենքերը քեզ վրա յեն իսկ
իմը՝ տանն են. արի նախ քեզ կապեմ, վորպեսզի չփախչես,
մինչև յես զնամ, զենքերս վերցնեմ զամ ու, ապա կովենք:

Առյուծն ասաց.

— Հիմա կապիր ինձ, շուտ զնա և յետ դարձիր:

Մարդը հանեց պարանը և առյուծին պինդ կապեց
կաղնի ծառին. մի մեծ փայտ կտրեց ծառից և սկսեց խփել
առյուծին:

Առյուծը բացահանչեց.

— Յեթե դու մարդն ես, ավելի ամուր ու անխնա խփիր
իմ կողերին, վորովհետև իմ խելքին այդ ե արժանի:

ՍՈՒՏԼԻԿ ՎՈՐՍԿԱՆԸ

Հորս կնունքով, մորս ծնունդով, վեր կացանք մի ուր
հինգ ու վեց հոգով, թրրով, թվանքով վորսի գնացինք:
Հաղին եր, Հյուզին եր, Չատին եր, Մատին եր, հայրս եր,
յես եյի գնացինք վորսի...

Սարեր, ձորեր դուզ գնացինք, շատ թե քիչ մին ել
տեսնենք յերեք լիճ, յերկուսը ցամաք, մնի մեջ ել իսկի
ջուր չկա: Մին ել ըհը, մտիկ տանք, վոր այս անջուր
լճում լողում են, ճշում յերեք հատ սպիտակ բաղ, յեր-
կուսը սատկած են, մինն ել կենդանի չի:

— Հաղի, տուր, հա տուր:

Թե՛ թվանք չունեմ:

— Հյուզի, տուր հա, տուր:

— Յես ել չունեմ:

— Չատի... Մատի...

— Մենք ել չունենք:

— Իա ի՞նչ անենք...

Հորս ձեռին կարճ ու յերկար, հաստ ու բարփի մի փետ
կար. յերեսն առավ նշան դրեց, մին ել՝ տրաք, վոր կրա-
կեց... Նա կրակեց, յես զարկեցի, վոր զարկեցի՝ փովեց
եսպես— ամեն թեր հինգ գազ ու կես...

— Հաղի, դանակ...

Թե՛ դանակ չունեմ...

— Հյուզի, դու...

— Յես ել չունեմ...

— Չատի, Մատի...

— Մենք ել չունենք...

— Իա ի՞նչ անենք...

Հերս ել ունի, բերան չունի...

Ես անբերան դանակը քաշեցինք: Հաղին մորթեց,

չկարաց, Հյուզին մորթեց, չկարաց, Չատին չկարաց, Մա-
տին չկարաց, հերս ել չկարաց, յես քաշեցի, մորթեցի:

Մորթեցի, վեր գցեցի. բաղ— մի ասիլ, մի դոմեչ
ասա: Հաղին շալակեց չկարաց. Հյուզին շալակեց չկարաց,
Չատին չկարաց, Մատին չկարաց, յես շալակեցի: Շալա-
կեցի, գնացինք:

Գնացինք, գնացինք, հասանք մի տեղ, մին ել տեսնենք
յերեք գեղ, յերկուսի տեղն իսկի չի յերեվում, մնումն ել
իսկի մարդ չկա: Ես անչեն գյուղում դես ման յեկանք,
դեն ման յեկանք, մի տուն գտանք մեջը յերեք պառավ,
յերկուսը մեռած, մնի բերանումն ել չունչ չկա:

— Տղերք, ասինք, յեկեք բաղով փլավ անենք:

Ես անչունչ պառավը գնաց դես ման յեկավ, դեն ման
յեկավ, կես բրինձ գտավ, յերեք պղինձ, յերկուսը ծակ,
մինն ել իսկի տակ չունի:

Ձուրը լցրինք ես անտակ պղինձը, մեջն ամեցինք
բաղն ու բրինձը, անկրակ յեփեցինք: Յեփեց, յեփեց, միսն
ու բրինձը գնացին, մնաց ջուրը:

Վորսից յեկած սոված մարդիկ, վրա յեկանք կերանք,
կերանք, վոչ աչքերս բան տեսավ, վոչ բերաններս բան
մտավ:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1. Յեկով փաթիլ— փաթիլ,
դնաց կաթիլ—կաթիլ:

2. Ճերմակ ե, շաքար չե,
ամուր ե, քար չե:

3. Իմ յերեկար ճամբեն
յերգով եմ գնում,
ամբողջ տարվա մեջ
ձմռան եմ քնում:

4. Պապը չինեց
մի կամուրջ,
չունի վոչ փայտ
վոչ ել մուրճ:

5. Կլոր ե, սխեռ չի,
թռչում ե, թիթեռ չի,
ջրի մեջ ջուր ե նա,
սառույցին քույր ե նա:

6. Չայն ե հանում
աղերսագին
ու չի տեսնում
մորն ու ձագին:

Հանելուկների բացատրություն (գտեր ինքներդ).

- Կարկուտ.
- Սառույց.
- Ձմեռն ու գետակը
- Գետակը.
- Կկուն.
- Չյուն.

ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ

1. Քամին կածանում
Ծառ ե ծառանում:

2. Վռամը դռանը,
Կոտմ ե կռանը:

3. Կար մի կարմիր կամ,
Կամ մի կարմիր կամ կար:

4. Ձյուն ձյան վրա,
Ձյունը՝ ձվի:

5. Կավը — գավ,
Գավը — կավ:

6. Աղվես, աղվես,
Աղով աղվես
Մաղով մաղվես,
Դեղով դաղվես,
Հողում թաղվես,
Պատից կախվես:

Առած՝

Ձմեռվա վարդը կրակն ե:

ԲՅՈՒՐԵՂԻԿՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

(Ժողովրդական հեքյաք)

(Ինսցենիքովկա)

Պապիկի և տատիկի տնակը, նկարված ստվարաթղթի թերթի վրա, յերկու կտրված լուսամուտներով, վորոնցից դուրս են նայում պապը և տատը:

Ստվարաթուղթն ամրացրած է հետևում դրված յերկու աթոռներին: Դուրս է վազում Բյուրեղիկն ընկերուհիների հետ:

Բյուրեղիկ: Պապիկ, տատիկ, թույլ տվե՞ք զնամ ընկերուհիներին հետ...

Տատիկ: Այդ ո՞ւր, Բյուրեղիկ:

Բյուրեղիկ: Անտառ: Տոնածառի համար կոնիկներ հավաքելու:

Պապիկ: Այնտեղ իրար կկորցնե՞ք...

Բյուրեղիկ: Չե՛, պապիկ ջան, ձայն կտանք առ՛ւ, առ՛ւ...

Տատիկ: Դե տե՛ս, Բյուրեղիկ, յերեկոյան շուտ արի:

Պապիկ: Թե չե, կպատահես արջի կամ գայլի, քեզ կուտեն:

Բյուրեղիկ: Յես կգամ, պապիկ: Յեզենու ճյուղեր ել կբերեմ, կոնիկներ ել:

(Բյուրեղիկի ընկերուհիներն սկսում են խմբական յերգ և միասին բեմի վրայով գնում են: Տնակը հեռացվում է, գրվում է անտառ (անտառը կարելի չէ առաջուց պատրաստել, — աթոռներ, վորոնց կապած են ծառի ճյուղեր): Ընկերուհիները ցրվում են ծառերի (աթոռների) մեջ, շարունակելով յերգը և կռանալով կոնիկներ հավաքելու):

Յե՛կ, յե՛կ, յե՛կ, յե՛կ, ձմեռ պապի,
Սիպտակ հագի, սիպտակ կապի.
Սար ու ձորում սուլիր, յերգի՛ր,
Գո վտաքիզ տակ ամբողջ յերկիր:

(Ղավում են առանձին ձայներ):

— Յես յեղենակոն գտա:

— Աո՛ւ, Բյուրեղիկ...

— Իսկ յես սոճեկոն:

— Աո՛ւ, աղջիկներ...

— Յես ե՛լի գտա:

— Աո՛ւ, Բյուրեղիկ:

(Հետզհետե ընկերուհիները հեռանում են: Բյուրեղիկը մնում է մենակ: Բայց նա միանգամից այդ չի նկատում: Նրան զբաղեցնում են պարող նապաստակները: Նապաստակների հետ կարող են պարել և վաթիլները: Բյուրեղիկը հաճույքով նայում է ու ծափ տալիս):

Բարով, բարով, սիրուն ձմեռ
Ինչ լավ յեկար դու մեզ մոտ,
Նա ուր է յիր եսքան որեր
Մնում է յինք քեզ կարոտ:

Փայլուն սպիտակ քո որերը,
Գիտես մենք շատ ենք սիրում,
Գո պարզ ողում մենք ամեն որ,
Յերգում, պարում ենք, խաղում:

(Պարերը վերջանում են, Բյուրեղիկը տեսնում է, վոր մենակ է մնացել):

Բյուրեղիկ: Վա՛յ, ընկերուհիներս: Աո՛ւ... (Վոչ վոր չի պատասխանում: Մի քանի անգամ ձայն է տալիս: Աո՛ւ, աո՛ւ... լուսթյուն): Ի՞նչ անեմ յես հիմա: Բորբոր գնացել են... և ճանապարհը չգիտեմ... արեն ել մայր ե մտել... (լաց ե լինում). ա՛յ, վախենում եմ. պապիկն արջի ու գայլի մասին ասում եր... հիմա ինձ չուտե՞ն... (լաց ե լինում): Բարձրանում ծառը... Նստեմ մինչև առավոտ: Այնտեղ ինձ չեն հասնի... (Բարձրանում է աթոռի վրա, իբր թե ծառը, յերգում է):

Պապին, տատին ունեյին
Փոքրիկ թոռնիկ, Բյուրեղիկ:
Անտառ տարան թոռնիկին,
Մենակ թողին Բյուրեղին...

(Յերածշտուրթյան տակ դուրս ե գալիս արջը, հոտոտում է, նայում):

Արջ: Այս ո՞վ է յերգում, իմ հանգիստը խանգարում:
Բյուրեղիկ: Այդ յես եմ, Բյուրեղիկը:

Արջ: Բարև, Բյուրեղիկ: Դե լավ, ցած արի, տանեմ տատիդ մոտ:

Բյուրեղիկ: Չե, արջիկ-փարջիկ, դու ինձ կուտես: Չեմ իջնի:

Արջ: Միևնույն ե ինձանից չես ազատվի: Յես քեզ կրոնեմ:
(Գոռում է, գնում):

Բյուրեղիկ: (Յերգում է իր յերգը): Պապին, տատին ունեյին...

Գայլ: (Դուրս ե վազում, պտույտներ ե կատարում ծառի շուրջը, ատամները չխկչխկացնում):
Իջի՛ր ցած, Բյուրեղիկ, յես քեզ տանեմ տատիդ մոտ:

Բյուրեղիկ: Չե՛, դայլ-բիձա, չեմ իջնի:

Գայլ: Միևնույն ե ինձանից չես ազատվի: Յես քեզ կրոնեմ: (Գնում է):

Բյուրեղիկ: (Յերգում է իր յերգը): Պապին, տատին ունեյին...

(Դուրս ե վազում աղվեսը):

Աղվես: Իջի՛ր, Բյուրեղիկ, յես քեզ տանեմ տատիդ մոտ:

Բյուրեղիկ: Աղվեսի մասին պապիկս վոչինչ չի ասել...
Լավ: Յես կիջնեմ: (Իջնում է):

Աղվես: Բռնի՛ր պոչիցս ու ձայն, ծպտուն չհանես:
(Վազում է Բյուրեղիկի հետ: Համարյա անմիջապես դուրս են թռչում արջն ու գայլը):

Արջ: Ո՞ւր ե Բյուրեղիկը:

Գայլ: Փախավ:

Արջ: Հասի՛ր, բռնի՛ր...

Գայլ: Հասի՛ր...

(Վազում ե աղվեսը Բյուրեղիկի հետ, նըրանց հետևից արջն ու գայլը: Գիչ ե մնում հասնեն: Բայց ահա, վերջապես, պապիկի տնակը, վորը դուրս են բերում):

Աղվես: Լուսամուտը ծեծի՛ր, Բյուրեղիկ, շուտ արա, ծեծի՛ր:

Բյուրեղիկ: Պապիկ, տատիկ: Բաց արեք դուռը, շո՛ւտ: Յես եմ, Բյուրեղիկը:

(Լուսամուտի առաջ յերևում են պապիկն ու տատիկը):

Պապիկ: Բյուրեղի՛կ:

Տատիկ: Քեզ համար այնքա՞ն եմ լացել:

Բյուրեղիկ: Արջն ու գայլն ընկել են մեր հետևից...

Պապիկ: Չա՛յն տուր, ոգնություն կանչի՛ր... այստեղ յեկեք... այստե՛ղ...

Տատիկ: Այստե՛ղ... այստե՛ղ...

(Դուրս են վազում ընկերուհիները):

Արջ: Ե, դայլ յեղբայր, թե ուզում ես մենակ հասիր, յես անտառում շատ դործ ունեմ: (Գոռում, հեռանում է):

Գայլ: Իսկ իմ ինչի՞ն ե պետք Բյուրեղիկը: Յես վազում եյի այնպես, սիրտս զբոսնել եր ուզում: (Գնում է):

(Ընկերուհիները փախցնում են արջին ու գայլին ու շրջապատում տնակը: Դուրս են գալիս պապիկն ու տատիկը):

Տատիկ: Առ, աղվեսիկ, աշխատանքիդ համար, քաղցր կաթ:

Պապիկ: Առ, աղվեսիկ, կարկանդակ կեր:

Բյուրեղիկ: Իսկ յես, աղվեսիկ, քեզ համար կպարեմ:


(Յերածշտուրթյուն: Յերգում են վերև հիշված յերգերից մեկը: Բյուրեղիկը պարում է: Նրա հետևից աղվեսը: Պապիկն ու տատիկն ել հետ չեն մնում: Վերջանում ե ընդհանուր պարով):

Թարգմ. Զ. Անեմյան


ՅԵՌԿԱՐ ԱԴՐԻ ՄԵՐ ՄՏԱԼԻՆՇ

խոսք Թողովրդական.


չերածող. Ա. Սերերբակյանի.



շեր-կար ա-պրի մեր Ստա-լին - նը կար-միր ա ըն



պի պես րոջ մեզ վր լու վրա-դատի լի-նի



կանն ընտ ծնը առ ըն պես: ըն պես:


2. Յերկար ապրի մեր Ստալինը
 Կարմիր արևի պես,
 Թող մեզ վրա վստահ լինի,
 Կանգնած ենք սարի պես:

3. Հաստատ մնա մեր Ստալինի
 Կուռ ու պողպատ կամքը,
 Վոր մեզ ավեց ու պարզեց
 Մեր այս ուրախ կյանքը:

ՉՄԵՌՎԱ ԻՐԻԿՈՒՆՇ

խոսք Ա. Գրիգորյանի

չերածող ու իրողանկար -
 ՄԱԿ ԶԽՈ



Դող ճը մե գող յեր կիշքն առ շուտ գառ արժ վրա Ե ը յյան



Մին. ճան-կան պես լաց և լի-նում մին վրա շուտ և վերք գա պան



Մի վայ-րե նի սու-լում պես պես առ ճը-կում և տա նի բում



մին ու շա պած ճամ բորդ-ա-սես լու սա մտքն և նա լա կում



մին ու շա պած կամ բորդ ա սես լու սա-մտքն և միջո լա-կում:

ՉԱՆ ՅՈՂԾԱՆՈՒ ԾԱՌ

որակի

խոսք՝ Շայքունի
Յերածջտ. ուժը-Շատի.

Չան յե- ղեզ- նու ծառ թեզ հա-
 վար բա թեզ մեր առ նը
 սոյն ծառ հու յեւ վար դա թեզ:

2. Գայիս ես հանկարծ
 Հեքյաթ հյուրի պես,
 Զուգսերդ հազամ
 Վողջուհում ես մեզ:

3. Լույսերի ծովում
 Մանկական խաղով,
 Քեզ գովք են անում
 Անուշիկ տաղով:

4. Չան, յեղենու ծառ,
 Քեզ հազար բարև,
 Մեր տունը պայծառ
 Դու յես զարդարել:

ԽՆԴՈՒԹՅԱՆ ՏՈՆԱԾԱՌ

խոսք՝ Մկրտիչ Կորյունի.
 Աղետ-ծ.

Յերածջտուտուն
 Միբայել Միբայանի

հա վար լույ- սով, հա- վար հույ վով,
 հա- վար թեր- թով ես դու յե- կել
 հնչ- բան լայն ես հնչ- բան պայ- ծառ
 հա զան 'սըն դու թյան տո նա. ծառ:

2. Մեր մեծ Ստալինը հարազատ
 Պարզեկեց մեզ նոր կյանք ազատ,
 Կյանքն ուրախ է, կյանքը պայծառ,
 Հեյ Չան, խնդուիթյան տոնածառ:

3. Մեր ուրախ յերգն է զիլ հնչում,
 Առվակի պես միշտ կարկաչում.
 Ստալինյան արևով դու վառ
 Հեյ Չան, խնդուիթյան տոնածառ:

խոսք գ. Սարյանի ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ՁՅՈՒՆԸ. յերստիւտ. Դ. Պապարյանի

— Ասա ապա՛ ինչիցն է վոր
 Թե՛վեր ունես ասեղնավոր:
 — Ճերմակ փաթիլ, սիրուն թիթեռ,
 Բյուրեղիկներ հաղարավոր:
 — Ճերմակ փաթիլ, սիրուն թիթեռ,
 Իջիր, իջիր յերկիրը մեր.
 Իջիր անթիվ քույրերի հետ,
 Գարունը գա, կգառնաք հետ:
 Իսկ հիմա մենք յերկնի տակ
 Դաշտում հյուսենք ճերմակ վերմակ,
 Տաքացնենք ցորեն, գարի
 Դարնանն առատ թող հաց լինի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I Բաժին—Յերգեր և բանաստեղծություններ

1. Ծերունի նինիկան— Հ. Հայրապետյան	9
2. Յերեխաներ— Ս. Ստալսկի	11
3. Ձմեռվա իրիկունը— Ա. Ս. Պուչկին, Թարգմ. Հ. Թումանյան	12
4. Ձմեռ— Ա. Թ. Խնկոյան	13
5. Մանուկն ու ձյունը— Գ. Սարյան	14
6. Մեր տոնածառը— Հ. Հայրապետյան	16
7. Տոնածառին— Ա. Շայրոն	17
8. Խնդության տոնածառ— Մ. Կորյուն	18
9. Հիշեր յեղբայրիկներիդ— Ա. Բարսո	19
10. Պեճիկ հորթը— Հ. Աղաբաբ	21
11. Փոքրիկ հովիվը— Հ. Շիրազ	22
12. Սուրիկի նամակը— Ղ. Կոմունի	23
13. Մանուկն ու ծիտիկը— Մ. Կորյուն	24

II Բաժին—Արձակ

1. Ընկեր Սերգոյի նվերը— «Պիտներսկայա Պրավդա»-ից	27
2. Բուզյոննին յերեխաների հետ— ըստ Լ. Կասսիլի	28
3. Սահմանապահ հերոսների նամակները	32
4. Ինչո՞ւ յես սիրում եմ ընկեր Ստալինին (յակուտացի յերեխայի պատմածը)	35
5. Փիլոսը— Ստ. Չորյան	37
6. Պատմվածքներ բևեռում ձմեռողների կյանքից— Դ. Չարեցկի	39

7. Քաջ Ճրունդիկը— Ստաֆֆի	45
8. Աղջիկն ու լուցկիները— Հ. Խ. Անդերսեն	47
9. Լինա Ուենա	50


III Բաժին— Զվարճալիք


1. Ճպուռն ու մրջյունը— Աթ. Խնկոյան	55
2. Ծիտիկների զրույցը	59
3. Առյուծն ու մարդը— Վ. Այգեկցի	59
4. Սուտլիկ վորսկանը— Հ. Թումանյան	60
5. Հանելուկներ	62
6. Շուտասելուկներ	63
7. Բյուրեղիկն ու աղվեսը	64

Կազմեցին և խմբագրեցին՝ Մ. Կորյուն և Ս. Ուանյան
 Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
 Մրբագրիչ՝ Ա. Արզաբանյան

Գլավ. լրագոր Խ—9323. Հրատ. 4404, Պատ. 1337, տիրաժ 5000.
 Հանձնված է արտադրութան 19 դեկտեմբերի, 1937 թ.
 Ստորագրված է տպելու 27 դեկտեմբերի, 1937 թ.
 Թուղթ 74×110, տպագրական 4³/₄ մ., մեկ մամուլում 43008
 նիշ, հեղինակային 5 մ.

Պետհրատի տպարան, Յերևան, Լենինի 85





- 50

ՀՀ Ազգային գրադարան



NL1641308

30 DEC 1937

916 C 75 4.

576

11

28177



ПОДАРОК К НОВОМУ ГОДУ
Гиз Арм. ССР, Ереван, 1937